ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 36-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ավագանու անդամների քվեարկության արդյունքները.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու՝ 18.05.2020թվականի արտահերթ նիստի օրակարգը /կցվում է/:

Ավագանի՝ (կողմ - 9) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՕՐԱԿԱՐԳ

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 18.05.2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԺԱՄԸ՝ 15:00

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
   /զեկ. Կ.Եղիազարյան/

2. Ապարան համայնքի էներգաարդյունավետության շրջանառու նպատակային բյուջետային ֆոնդի (ԷԱՇՖ) ստեղծման մասին:
   /զեկ. Հ.Մկրտչյան/

3. Ապարան համայնքի զարգացման 2020թ. տարեկան աշխատանքային պլանում /ՏԱՊ/ լրացում և փոփոխություն կատարելու մասին:
   /զեկ. Գ.Աբրահամյան/

4. ՀՀ կառավարության կողմից համայնքին նվիրաբերած գույքը համայնքի հաշվեկշիռ ընդգրկելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
   /զեկ. Գ. Երեմյան/

5. Ապարան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:
   /զեկ. Վ.Սուքիասյան/

6. Ապարան համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:
   /զեկ. Վ.Սուքիասյան/

7. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքում ծառերի սանիտարական էտման եվ չորացած ու բարեկարգմանը խոչընդոտող ծառերի հատման աշխատանքներ կատարելու թույլտվություն տալու մասին:
   /զեկ. Հ.Մկրտչյան/

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Երեմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 37-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ (ԷԱՇՖ) ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 25-րդ կետերով և 92-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2. հոդվածի 11-րդ, 15-րդ մասերի և 16-րդ մասի «ա» ենթակետի, գործելով Ապարան համայնքի ավագանու կողմից հաստատված Կայուն էներգիայի գործողությունների ծրագրի շրջանակներում, հաշվի առնելով Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագիր» ծրագրին Ապարան համայնքի անդամակցությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ստեղծել համայնքի էներգաարդյունավետության նպատակային բյուջետային ֆոնդ՝ էներգաարդյունավետության (ներառյալ ինտեգրացված վերականգնվող էներգետիկայի) ներդրումները ֆինանսավորելու համար՝ օգտագործելով շրջանառելության մոտեցումը:
2. Առաջնորդվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2. հոդվածի 16-րդ մասի «ա» ենթակետով՝ համայնքային հիմնարկի անվամբ գանձապետական միասնական հաշվում բացել արտաբյուջետային ենթահաշիվ՝ էներգաարդյունավետության նպատակային բյուջետային ֆոնդի մուտքերի և ելքերի կատարման և առանձնացված հաշվառման համար:
3. Հաստատել էներգաարդյունավետության շրջանառու նպատակային բյուջետային ֆոնդի գործառնական կարգը՝ ըստ սույն որոշման հավելված 1-ի:
4. Էներգաարդյունավետության շրջանառու նպատակային բյուջետային ֆոնդի կառավարման և գործողության պատասխանատվությունը վերապահել Ապարան համայնքի ղեկավարին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (կողմ - 9) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

Հավելված 1

Հաստատված է
Արագածոտնի մարզի Ապարան համայնքի
ավագանու՝ 18 մայիսի 2020թ.
թիվ 37-Ա որոշմամբ

Գործառնական կարգ

Էներգաարդյունավետության շրջանառու նպատակային բյուջետային ֆոնդի

Էներգաարդյունավետության շրջանառու նպատակային բյուջետային ֆոնդի գործառնական կարգը (այսուհետ՝ «Կարգ») նպատակ ունի կանոնակարգել Ապարանի ավագանու՝ 18.05.2020թ. թիվ –Ա որոշմամբ ստեղծված Էներգաարդյունավետության շրջանառու ֆոնդի (այսուհետ՝ «ԷԱՇՖ) ներքո էներգաարդյունավետության ֆինանսավորման մեխանիզմի իրականացման նպատակով գործընթացների և ընթացակարգերի կանոնակարգումը:

Կարգը կանոնակարգում է հետևյալ գործընթացները՝

ա) Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ծրագրերի իրականացումից ստացված միջոցների հավաքագրում,
բ) ԷԱՇՖ միջոցներից ֆինանսավորման նպատակով ծրագրերի ընտրություն,
գ) ԷԱՇՖ միջոցներից ծրագրերի ֆինանսավորում,
դ) ԷԱՇՖ միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվայնություն,
ե) ԷԱՇՖ ներքո ֆինանսավորված ծրագրերի մասին հաշվետվայնություն,
զ) Սույն Կարգի իրագործման՝ համայնքային իշխանությունների և համայնքապետարանի անձնակազմի պատասխանատվությունը:

ԷԱՇՖ միջոցների հավաքագրումը

1. <u>Ֆինանսավորման աղբյուրներ</u>

ԷԱՇՖ ֆինանսավորման աղբյուրները հետևյալն են՝

1) Հատկացումներ համայնքային բյուջեից,
2) Հատկացումներ պետական բյուջեից,
3) Ֆինանսական հաստատությունների կողմից հատկացումներից, եթե տրամադրվում են էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրումների իրականացման համար,
4) Հատկացումներ միջազգային դոնոր կազմակերպություններից ու ծրագրերից,
5) Ներդրումային ծրագրերի համաֆինանսավորումից,
6) Տեղական և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանցից կամավոր հատկացումներից՝ ուղղված Ապարանում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայիծրագրերի աջակցմանը,
7) էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ծրագրերի իրականացման արդյունքում առաջացած էներգախնայողությունից մուտքերից,
8) օրենքով չարգելված այլ միջոցներից:

2. <u>Ֆինանսավորման պայմաններ</u>

Ֆինանսավորումը կարող է հատկացվել որպես՝

1) հատուկ նպատակային ներդրում,
2) դրամաշնորհ,
3) պայմանական դրամաշնորհ կամ փոխառություն՝ ավագանու նախնական հավանությամբ,
4) ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համայնքում էներգաարդյունավետության բարելավման համար:

3. <u>Ֆինանսավորման փաստաթղթավորումը</u>

Ֆինանսավորումը պետք է ապահովվի փաստաթղթային հիմքերով: Այդ փաստաթղթերը պետք է գրանցվեն և առանձնացված պահվեն հաշվապահական բաժնում: Այդպիսի փաստաթղթերի ցանկը, ի թիվս այլոց կարող է պարունակել հետևյալը՝

1) ֆինանսավորման համաձայնագիր/պայմանագիր՝ կնքված Ապարան համայնքի կողմից,
2) ֆինանսավորման մտադրությունների մասին արձանագրություն կամ ակտ,
3) գրություն ֆինանսավորողից՝ որպես ֆինանսավորման մտադրության կամ փաստի ապացույց,
4) բանկային փոխանցման պատճեն,
5) բանկային հաշվի քաղվածք,
6) վճարումների հաստատում, եթե առկա են,
7) ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդունման ակտեր, եթե հատկացումն ապրանքային տեսքի է,
8) այլ փաստաթղթեր, որոնք ընդունել են հաշվապահական բաժնի համար՝ միջոցների մուտքը ՀՀ օրենսդրության համաձայն ձևակերպելու համար:

ԷԱՇՖ ներքո ծրագրերի ֆինանսավորումը

Համայնքապետարանի աշխատակազմը, ելնելով համայնքի կարիքներից, կարող է համայնքի ղեկավարին առաջարկներ ներկայացնել ծրագրերի իրականացման համար: Միևնույն ժամանակ ծրագրերի ֆինանսավորման հայտեր կարող են ներկայացվել համայնքային հաստատությունների, պետական և դոնոր ծրագրերի, մասնավոր հատվածի, բնակիչների կողմից: Համայնքապետարանի աշխատակիցները, ովքեր պատասխանատու են քաղաքաշինության, ֆինանսների և իրավաբանական հարցերի համար, պետք է պատրաստեն փաստաթղթեր՝ ծրագրերի ԷԱՇՖ ֆինանսավորման պայմաններին համապատասխանելիության վերաբերյալ: Անձնակազմի դիրքորոշումը պետք է հիմնված լինի սույն Կարգով սահմանված չափոփշիչների վրա:

4. Ծրագրերի համապատասխանելիության չափորոշիչներ

ԷԱՇՖ ֆինանսավորում է Ապարան համայնքում իրականացվող էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ծրագրեր: Ծրագիրը ԷԱՇՖ կողմից ֆինանսավորելու համար պետք է բավարարի հետևյալ չափորոշիչներին՝

1) ծրագիրը պետք է ներառի էներգաարդյունավետության և/կամ վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաներ,
2) նախատեսվող ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է էներգիայի խնայողություն,
3) գնահատված էներգախնայողությունը պետք է համարժեք լինի ներդրումների ետգնմանը առավելագույնը 15 տարիների ընթացքում,
4) ծրագրերը պետք է լինեն տեխնիկապես իրագործելի,
5) ծրագրերը կարող են իրականացվել համայնքային շենքերում և օբյեկտներում, բազմաբնակարան շենքերում՝ ամբողջական մոտեցմամբ, գյուղական բնակավայրերի անապահով ընտանիքների տներում:

ԷԱՇՖ ներքո ներկայացվող ծրագրերը պետք է ուղեկցվեն ներդրումների նախնական գնահատականով և էներգախնայողության կանխատեսումներով:

5. Ծրագրերի ընտրություն

Ներկայացված առաջարկներից ծրագրերի ընտրության նպատակով հատուկ կոմիտե է ձևավորվում (ԷԱՇՖ կոմիտե), կազմված համայնքի ղեկավարի տեղակալից, աշխատակազմի քարտուղարից, ֆինանսական, իրավաբանական, քաղաքաշինական բաժինների ներկայացուցիչներից, էներգետիկ կառավարիչից:

Հիմնվելով կոմիտեի յուրաքանչյուր անդամի անհատական գրավոր եզրակացության, ինչպես նաև յուրաքանչյուր հայտի վերաբերյալ քննարկումների վրա, կոմիտեն որոշում է կայացնում հաստատել կամ մերժել հայտը: Որոշումը ներկայացվում է համայնքի ղեկավարին՝ իրագործման համար: Աշխատակազմի քարտուղարը ծանուցում է հայտատուին որոշման մասին՝ համապատասխան հիմնավորմամբ: Կոմիտեի բոլոր նիստերը արձանագրվում են, և արձանագրությունները պահվում են աշխատակազմի քարտուղարի գրասենյակում: Հաստատված ծրագրերի վերաբերյալ արձանագրության կրկնօրինակը պահպանվում է հաշվապահական բաժնում:

6. Ծրագրերի ֆինանսավորում

Հաստատված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի, համայնքային ընթացակարգերով և այլ իրավական ակտերով: Ի լրումն, ֆինանսավորման փաստաթուղթ է ստորագրվում համայնքի և հայտատուի կամ ծրագրի իրականացման պատասխանատու կառույցի միջև: Եթե շահառուն տարբերվում է իրականացնող կառույցից, ապա եռակողմ պայմանագիր է կնքվում՝ խնայողությունից վճարումներ կատարելու պարտավորությունը սահմանելու նպատակով:
Ֆինանսավորումը կատարվում է կատարողականի հիման վրա, այսինքն բոլոր աշխատանքների ավարտից հետո, կամ աշխատանքների տրամաբանական տեխնոլոգիական ավարտուն բաղադրիչի համար: Միջոցները փոխանցվում են համայնքապետարանի կողմից՝ համաձայնագրում նշված կողմին:
ԷԱՇՖ կողմից կատարված վճարումները պետք է լինեն «փակող» կամ ավարտական վճարներ, ինչը նշանակում է, որ վերջին վճարումը միշտ պետք է իրականացվի ԷԱՇՖ-ից՝ ԷՆերգետիկ մենեջերի կամ մասնագիտացված ճարտարագիտական ընկերության կողմից էներգախնայողության հավաստումից հետո:
Դոնոր ծրագրերի համաֆինանսավորման դեպքում գործում են այդ ծրագրերով սահմանված ընթացակարգերը:

ԷԱՇՖ հաշվետվայնությունը

7. Միջոցների վերաբերյալ հաշվետվություն

Հաշվապահական բաժինը պետք է պատրաստի և համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին ներկայացնի ամսեկան հաշվետվություն՝ արտացոլելով հատուկ հաշվի մուտքերը և ելքերը, ինչպես նաև վճարման նպատակները և մնացորդը ամսվա վերջի դրությամբ:
Հաշվետվությունը պետք է տրամադրի տվյալներ ըստ ֆինանսավորման աղբյուրների գումարների վերաբերյալ:
Նման հաշվետվություն պետք է պատրաստվի տարեկան կտրվածքով և ներկայացվի ավագանու անդամներին ոչ ուշ քան յուրաքանչյուր օրացուցային տարվա մարտի 1-ը:

8. Ծրագրերի վերաբերյալ հաշվետվություն

Ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է համայնքի ղեկավարին և ավագանու անդամներին աշխատակազմի քարտուղարի կողմից՝ հիմք ընդունելով հաշվապահական և քաղաքաշինական բաժնի, էներգետիկ մենեջերի և այլ պատասխանատուների կողմից տրամադրված տեղեկատվությունը:
ԷԱՇՖ ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տվյալները՝

1) ծրագրի անվանում
2) իրականացնող կառույց/կապալառու
3) իրականացման ժամկետ
4) ծրագրի ընդհանուր գումար
5) ԷԱՇՖ ֆինանսավորման գումար
6) ավարտված աշխատանքների (ապրանքներ, ծառայություններ) գումար
7) ԷԱՇՖ-ից վճարված գումար
8) ծրագրի համար կանխատեսված էներգախնայողություն
9) ծրագրի փաստացի արդյունքներ՝ ավարտից մեկ տարի հետո:

Բոլոր հաշվետվությունների կրկնօրինակները պահվում են աշխատակազմի քարտուղարի մոտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 38-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ /ՏԱՊ/ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 82-րդ հոդվածի պահանջներով, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների դրույթներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարան համայնքի զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվող 2020թ. տարեկան աշխատանքային պլանում /ՏԱՊ/ կատարել լրացում և փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

Ավագանի՝ (կողմ - 9) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես

/Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

Հավելված

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

N	ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	Բնակավայր	Ծավալ, քանակ		Համայնքի ֆինանսավորումը /հազ. դրամ	
			Նախատեսված	Փոփոխված	Նախատեսված	Փոփոխված
ՈԼՈՐՏ 4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
1	Հեղեղատարների և ոռոգման ջրատարների մաքրման աշխատանքներ	Ըստ անհրաժեշտության	20 կմ	15,5 կմ	4.000,0	3.020,0
11	Ներգյուղական ճանապարհի ասֆալտի փոսային նորոգում	Լուսագյուղ	--	190 քմ	---	980,0
ՈԼՈՐՏ 8. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ						
5	Եղեռնի օրվան նվիրված հիշատակի միջոցառումներ	Ապարան	21 բնակ.	--	100,0	--
6	Հաղթանակի օրվան նվիրված միջոցառումներ	Ապարան	21 բնակ.	--	300,0	--
7	Բաշ Ապարանի հերոսամարտի 102-րդ ամյակի տոնակատարություն	Ապարան	21 բնակ.	--	800,0	--
8	Երեխաների պաշտպանության օրվա միջոցառումներ	Ապարան	21 բնակ.	--	700,0	--
9	Շրջանավարտների հավաք	Ապարան	21 բնակ.	--	300,0	--
10	Ամենամյա միջազգային քանդակագործության սիմպոզիում	Ապարան	x	--	8.000,0	--
30	Մանկական խաղահրապարակների և հանգստյան գոտիների բարեկարգում, խաղասարքերի գնում և տեղադրում	Ապարան	--	3/700	--	10.200,0

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 39-Ա

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.04.2020թ. թիվ 669-Ա որոշումը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ կառավարության կողմից Ապարան համայնքի Հարթավան գյուղում կառուցած՝ 2.736.000 (երկու միլիոն յոթ հարյուր երեսուն վեց հազար) դրամ արժողությամբ փողոցային լուսավորության ցանցն ընդգրկել համայնքի հաշվեկշիռ և ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2. ՀՀ կառավարության կողմից Ապարան համայնքի Քուչակ գյուղում կառուցած՝ 3.672.000 (երեք միլիոն վեց հարյուր յոթանասուներկու հազար) դրամ արժողությամբ փողոցային լուսավորության ցանցն ընդգրկել համայնքի հաշվեկշիռ և ճանաչել որպես համայնքային սեփականություն:

Ավագանի՝ (կողմ - 9) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 40-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականությունը համարվող 0.54466հա հողամասերն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու:
2. Հաստատել օտարվող հողամասերի մեկնարկային գները և հավելաճի քայլերը՝ համաձայն աղյուսակի:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդ-վաճառքը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ավագանի՝ (կողմ - 9) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

Աղյուսակ

Հողերի աճուրդ- վաճառք

Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Նպատակային նշանակությունը, հողատեսքը	Մակերեսը /հա/	Մեկնարկային գին /դրամ/	Հավելաճի քայլը /դրամ/	Անվանումը
1.	ք. Ապարան Մ. Բաղրամյան փ. 64/8	0138-0103	Բնակավայրերի / հասարակական կառուցապատման	0.10302	420 000	23000	Հասարակական կառուցապատման
2.	ք. Ապարան Նանսենի փ. 4/1	0100-0030	Բնակավայրերի / բնակելի կառուցապատման	0.2197	890 000	48000	Բնակելի կառուցապատման
3.	ք. Ապարան Մ. Բաղրամյան փ. 4/43	0049-0068	Բնակավայրերի / բնակելի կառուցապատման	0.0094	141000	8500	Բնակելի կառուցապատման
4.	գ. Ափնագյուղ 1-ին փողոց 9	0013-0005	Բնակավայրերի / հասարակական կառուցապատման	0.21254	1594000	85000	Հասարակական կառուցապատման

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 41-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջարկվող հողատարածքը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով, ՀՀ Կառավարության 06.02.2020թ-ի թիվ 105-Ն որոշմամբ հողատարածքը առանձնացվել է որպես առանձին միավոր և հանվել է չմասնավորեցվողների ցանկից և փոխվել է գյուղատնտեսական վարելահողի:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետով և ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշումով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականությունը հանդիսացող Ապարան համայնքի Սարալանջ գյուղի վարչական տարածքում գտնվող 0.14հա վարելահողն ուղղակի վաճառքի միջոցով օտարել <ՌՈԶ ՖԻԼՏ> ՍՊԸ-ին, իրենց սեփականության իրավունքով պատկանող երկու հարակից հողատարածքները միավորելու՝ հետագայում ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ - 9) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 42-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԷՏՄԱՆ ԵՎ ՉՈՐԱՑԱԾ ՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածների, հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Ապարան համայնքի ղեկավարին 2020 թվականի ընթացքում (գարնան և աշնան ամիսներին) համայնքի տարածքում իրականացնելու ծառերի սանիտարական էտման և չորացած ու բարեկարգմանը խոչընդոտող ծառերի հատման աշխատանքներ:

Ավագանի՝ (կողմ - 9) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Վարդանյան Հովհաննես

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան